«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

“BLEJAN”
ECOLOGICAL, SOCIAL, BUSINESS
SUPPORT NGO

Հասցե. ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1-ին նրբանցք, տուն 16
Հեռ. (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
Web: www.blejan.org

Address.RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
Tel.: +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
E-mail: info@blejan.org blejanli@gmail.com

ԲԼ–Գ–020 14.10.2020

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Ռոմանոս Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան
Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն Գեղարքունիքի մարզի բոլոր ՓՀԷԿ-րի մասին, այն է.

✓ Գեղարքունիքի մարզում շահագործվող բոլոր ՓՀԷԿ-րի թիվը՝ յուրաքանչյուր ՀԷԿ-ի համար նշելով.
- ՓՀԷԿ-ի տեղակայման վայրը՝ համայնքը, գետը
- Անվանումը և շահագործող ընկերությունը
- Ջրօգտագործման թույլտվության ժամկետները և քանակները
- Աշխատելու ամիսները /յուրաքանչյուրի համար առանձին/
- Հզորությունը և արդյո±ք պատվար կա կառուցված այդ ՀԷԿ-ի համար
- Որ ՀԷԿ-ը պետական ինչ ֆինանսական արտոնություններից է օգտվել կառուցման և շահագործման ընթացքում
- Խախտումներով կառուցված ՓՀԿ-ը /որոնք պարզվել են տարբեր մոնիտորինգների արդյունքում, որոնք երբևէ տուգանվել են, կասեցվել են գործունեությունները, զրկել լիցենզիայից, նշել նաև պատճառները/

Թղթային տարբերակները ստանալու համար պատրաստ ենք վճարել, եթե էջերի թիվը գերազանցում է օրենքով պահանջվածը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ Լիաննա Ասոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 2/10.5.9/11739

«22» «10» 2020 թ.

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի
նախագահ տիկին Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N ԲԼ-Գ-020 գրության ներկայացնում եմ Գեղարքունիքի մարզում գործող հէկերի և փհէկերի վերաբերյալ տեղեկատվությունը և հայտնում, որ՝

- փհէկերի հզորության վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական էջից՝ www.psrc.am,
- շրջակա միջավայրի նախարարությունը կառուցման և շահագործման ընթացքում պետական ֆինանսական արտոնություն ստացած փհէկերի վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում,
- վարչական իրավախախտումների ենթարկված փհէկերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:

Առդիր՝ 1 նիշք:

Հարգանքով՝

Տ. Սիմոնյան

10/22/2020

X

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Подписано: SIMONYAN TIGRAN 1101800712

Լիցենզիաների,թույլտվությունների և համաձայնեցումների վարչության
պետական կադաստրների,ռեեստրների վարման
և մոնիթորինգի բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
t.simonyan@env.am | www.env.am
հեռ. +374 11 818 560 | ֆաքս՝ +374 11 818 506

Լ. Սմբատյան 011 818-543